

ՈՒՂՂԱԳԱՌՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐՎԱՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՉԽԱՐԴԱՅԻՆ ԽՈՐԴՐԴԻ 9-ՐԴ ՇԱՄԱԺՈՂՈՎԻՑ ԱՌԱՋ

(Նոողոս, 10-17 հունվարի 2005 թ.)

2005 թ. հունվարի 10-17-ը Տիեզերական Պարբիարք Նորին Ամենասրբություն Բարդու-
ղիմսու Ա-ի հրավերով Հոռորու կղզում գտնվի ունեցավ Ուղղափառների՝ Եկեղեցիների Հա-
մաշխարհային Խորհրդի 9-րդ Համաժողովի նախապատրաստական հավաքը, որին Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Միջնակեղեցական հարաբերությունների գրա-
սենյակի պարասխանավոր Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյանը:

Հավաքի նպատակն էր անդրադառնալ 9-րդ Համաժողովի թեմային, որն է՝ «Ասրբած,
Զո շնորհով փոխակերպիր աշխարհը», քննել Ե՛Ն-ու ուղղափառների մասնակցության
կոմիտեի գործադիր մարմնի աշխապանքները և որոնել ճանապարհներ, որոնցով Ուղղա-
փառ Եկեղեցիները կարողանան առավել ազդու դարձնել իրենց մասնակցությունը բաժան-
ված քրիստոնյաններին միավորող այս շարժման մեջ:

Հավաքն ի մի թերեւ Արևելյան Ուղղափառ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների
ավելի քան 50 մասնակիցների՝ ասրբածարանների, բարձրաստիճան եկեղեցականների,
քահանաների, աշխարհականների և երիտասարդների: Հավաքը նախագահեցին Մասի-
մայի Գենադիոս (Կոստանդնուպոլիսի Տիեզերական Պարբիարքություն) և Դամիեթի Բիշոյ
(Պարբի Ուղղափառ Եկեղեցի) մեքրոպոլիկոնները:

Քննարկվեց 2006 թ. կայանալիք Ե՛Ն-ի 9-րդ Համահավաքի թեմայի ասրբածարանա-
կան և հոգևոր ընկալումը, Ե՛Ն-ու կյանքում և գործունեության մեջ առաջիկայում սպասվող
փոփոխությունների հնարավոր ազդեցությունները, վերանայվեցին Համահավաքի պար-
բաստության գործնական հարցերը և Ե՛Ն-ի 9-րդ Համահավաքի թեմայի շուրջ կարարվե-
ցին հետքյալ եզրակացությունները.

1. Մեր Եկեղեցիները ճանաչում են բազմամշակութային, բազմակրոն և աշ-
խարհական այն հանրությունները, որոնցում ապրում են մեր հավաքացյանները:
Այս նոր իրավիճակը թելադրում է համապատասխան հովվական և ասրբածարա-
նական գործունեություն: Վերափոխումը մի շարունակական գործներաց է: Պար-
մության երկակիության մեջ Ասրծոն կամքը դիմունելու մեր պատրաստակամությու-
նը նույնականացնելու շարունակական առաքելություն է: Այն դիմունելու համար կարևոր է
մեր ապաշխարություն՝ որպես հավաքացյալներ և որպես Եկեղեցիներ: Այն գի-
գակցությունը, որ մենք կոչված ենք փրկության բարի լուրջ հայրնելու և աշխարհի
վերքերը բուժելու, դարձել է մեր հավաքի, աղոթքների, «Ասրբած, Զո շնորհով փո-
խակերպիր աշխարհը» թեմայի շուրջ մրորումների աղբյուրը:
2. Գալիք Համահավաքի թեման ներշնչման աղբյուր է դարբեր մակարդակներում
խորհրդածության համար: Թեմայի մեջ փեսնում ենք Ասրբած, Ճնորհ, փոխա-
կերպել, աշխարհ բառերից յուրաքանչյուրի կարևորությունը և աշխապում այն-

պիս անել, որպեսզի դրանք պափշաճորեն ընկալվեն թեմայի համարեսարտում։ Այս առումով աշխարհի վերափոխումը նախ և առաջ նշանակում է մեր անձնական փոխակերպումը։ Ս. Պողոսը խոսում է քրիստոնյաների մասին որպես «նոր արարչություն», քանի որ նրա ընկալմամբ վերափոխումը կամ փոխակերպությունը (Բ Կորնթ. Գ 18, Ռոռ. ԺԲ 2) վերաբերում է մի գործընթացի, որ սկսվել է արդեն իսկ այդ ժամանակաշրջանում։ Սուրբ Գիրքը հենքևտղականորեն ցույց է դադիս, որ աշխարհի վերափոխումը գործընթաց է, որով փրկության վերերկրային վախճանաբանական իրողությունն առկա է քրիստոնյաների երկրային կյանքում։ Քրիստոսի Հոգու շնորհներ հանդիսացող նոր արարչության նշաններն առաջնորդում են մեզ դեպի մեր պատրասխանի հրամայականը և նշանարում աշխարհի վերափոխումը։

3. Շնորհը, ինչպես այն ամենը, ինչ վերաբերում է Ասպծուն, Երրորդութեանական է։ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Հայր Ասպծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը՝ այս ամենը շնորհներ են։ Շնորհով արդարացվում ենք, շնորհով՝ բժշկվում։ Մինչդեռ շնորհը լոկ արդարացման զորությունը չէ։ Շնորհը արդարայդված է Ասպծո բոլոր գործերում։ Իր ներգործության մեջ, Իր գործողություններում, որոնք անձնական կամքի դրսնորումն են՝ Իր սիրուց դրդված։ Շնորհը վերաբերում է Ասպծո ազադ կամքին։ Ասրբած սպեղծելի է աշխարհը ոչնչից, որն առավելապես շնորհի արյունը է, քան անհրաժեշտության։ Նա նաև վերասպեղծում է այն, փոխակերպում Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որն առավելապես շնորհի, քան անհրաժեշտության հենքնանը է։ Մենք զոյլություն չենք կարող ունենալ առանց Ասպծո շնորհի, սիրո և Իր Սուրբ Հոգու միջոցով աշխարհը մշտապես պահպանելու, որով «մենք ապրում ենք, շարժվում ենք և՝ կամք» (հմնդ. Գործը ԺԵ 28)։ Ավելին, շնորհով է, որ Ասպծած դպի է մեզ Եկեղեցին, որում մենք կոչված ենք ապրելու միության մեջ ի Քրիստոս։ Միությունը Եկեղեցում մի է հոգնակիության մեջ, ինչպես Սուրբ Երրորդությունը։ Ասրբել և այժմ այս միությանը բաժնեկից լինելու ապագայում ասպժամային բնությանը բաժնեկից լինելու մեր կանխաճաշակումն է, մեր կոչումը սրբության և ասրբածացում։
4. Մենք հավաքում ենք Ասպծուն, Ով առաքեց Իր Միաձին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Նրանով աշխարհը հաշվեցրեց Իր հետ և Սուրբ Հոգու միջոցով բոլորին նոր և հավիրենական կյանք շնորհեց։ Քրիստոնեական մեր կյանքը պահպանվում է շնորհի կենդանարար ու սրբանող աղյուրում։ Սուրբ Հոգու զորությամբ։ Մարդկության վերջնական կոչումն ու զերազոյն նպագակը ասրբածացումն է (թեոսիս) (Բ Պետրոս Ա 4), ինչպես Ս. Աթանաս Մեծն է ասում «Ասրբած մարդացավ, որպեսզի մարդի ասրբածանա»։ Ասպծո անշահախնդիր, շնորհալի սերը մեզ դեպի Իրեն է ձգում (Ռոռ. Ե 15), քանի որ մարդիկ ոչ միայն սպեղծվել են Ասպծո կողմից, այլև Ասպծո համար։ Ասպծո մեջ մենք լիովին գտնում ենք մեր կյանքի նպագակը՝ վերականգնված և վերափոխված Իր շնորհարաշն ներկայությամբ (Բ Պետր. Ա 3)։ Այս իմաստով մեր փիեզերական քահանայական կոչումն է համայն աշխարհին ուղղորդել առ Ասրբած համայնքներում բարոյական ընդրության միջոցով, միասնական հավաքրով ու պաշտամունքով (Ռովի. Դ 23)։ Մենք զործում ենք միասնա-

բար ծառայելու սկզբունքով, որն էլ մեր պատրասխանն է ի հայր եկող քաղաքական և հասարակական մարդարարագերներին: Ծնարիկը քրիստոնեական հավաքրը, որ պես վկայություն և առաքելություն, խոսքով և գործով իրականացվող հավաքրն է:

Ժողովականներն անդրադարձան նաև ԵՎՍ-ում Ուղղափառների Մասնակցության Կոմիտեի Գործադիր Մարմնի աշխարհանքներին, գաղափարներին և գեկույցին՝ գիտելով, որ Գործադիր Մարմնի սրբեղությունը ու աշխարհանքն արդարացված են: Գործադիր Մարմնի գեկույցում հայրուկ ուշադրության արժանացան եկեղեցաբանության և ժողովներն ընդհանուր համաձայնության սկզբունքով գումարելու խնդիրները: Վերջինիս վերաբերյալ հավաքը եղակացրեց, որ դրա ներմուծումը ԵՎՍ-ի կանքի և գործի մեջ ԵՎՍ-ին կօժիի աշխարհանքները թափանցիկության և վստահության մթնոլորդում իրականացնելու հնարավությամբ, երբ բոլոր Եկեղեցիների գիտակերները հարգանքով կըսվեն ու կխրախուսվեն:

ԵՎՍ-ի վերաբերյալ ժողովականների եղակացությունն այն էր, որ աշխարհը զեռ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կարիքն ունի, այսինքն՝ մի խորհրդի, որ միավորում է քրիստոնեական այն կառույցները, որոնք իրենց համարում են Եկեղեցիների ծառայության համար աշխարհը կարիք ունի մի միջոցի, որով նրանց կարող է բերել երկխոսության դաշին աղոթելու և միության նկարմամբ նրանց պատրաստակամությունը հայդինելու համար: Այն հաշվի կանքի Եկեղեցաբանական խնդիրները և կիարօդի Եկեղեցաբանական չեղորդությունը, կիթանի աղոթքը, ասրբածաբանական բոլոր առումներով լուրջ կլինի, ներառյալ Եկեղեցիների անդամակցության հարցը, և բոլոր մակարդակներում այն կգործի ընդհանուր համաձայնությամբ:

Ժողովականները վայելեցին Եկեղեցու և վանականների, քաղաքացիական իշխանությունների և Հռողոսի բնակիչների շերմ եյուրընկալությունը, նաև դիմումների հին ու նոր մշակույթների բացառիկ նմուշներ: Հավաքն ընթացավ ամենօրյա աղոթքի և եղբայրության մթնոլորդում, իսկ խորհրդակցությունները՝ Համահավաքի թեմային առնչվող ասրբածաշրնջան հավաքածների խոկումներով, հարկադարձության հանդիպման համար պատրաստված համառուր ուսումնասիրությունների, ինչպես նաև ընդհանուր և առանձին խմբերով քննարկումների միջոցով:

Դողոսյան Միջուղյափառ հանդիպման ընթացքում առանձին հանդիպումներ են գրելի ունեցել նաև Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների (Հայ Առաքելական Եկեղեցի՝ Ամենայն Հայոց Կարողիկոսությունը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Ղպիդի Ուղղափառ Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպահայի Ձևահեղող Ուղղափառ Եկեղեցի և Հնդկի Մալարար Եկեղեցի) Միջեկեղեցական պատրոնային միջնորդությունների միջև:

Այս հանդիպումների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատրասխանակոր Գերաշնորհ Տ. Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ Միջեկեղեցական հարցերով պատրասխանակոր Գերաշնորհ Տ. Նարեկ Եպիսկոպոս Ավեմայանը:

Նանդիպումների ընթացքում քննարկվել են Եկեղեցական ընդունիքի ծոցում առկա մի շարք խնդիրներ, ինչպես նաև Ասրբածաշնչային ընկերության հետ համապետ աշխարհներ կապարելուն առնչվող հարցեր:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ